

63
p-15

04 AUG 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք

ԹԱԼԻՆԻ ՇՐՋԱՆԻ 1937 ՑՎԻ
ՊԱՐՏԱԴԻՐ
ԱԳՐՈ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐԸ

63
Բ-15

«Բ. ԳՐԱՇՈՎ»-Ի ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Վ. ԹԱԼԻՆ 1937 թ.

17.04.2013

14719

63 ար

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄ

ԹԱԼԻՆԻ ՇՐՋԱՆԱՑԻՆ ԳՈՐԾԱԴԻԲ ԿՈՄԻՏԵՅԻ
ԱԳՐՈ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆ-
ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հաստատված և Թալինի շրջանային
գործադիր կոմիտեյի նախագահության
1937 թվի փետրվարի 28-ի նիստում,
հիմք՝ արձանագրություն № 4).

Յեխելով ԽՍՀ Միության ժողովրդական
կոմիտազների Խորհրդի ս. թ. փետրը-
յարի 5-ի վորոշումից՝ բերքատվության
առաջացման մասին, Թալինի շրջանային
գործադիր կոմիտեն 1937 թվի համար սահ-
մանում և հետեւյալ պարտադիր ազրուելի-
նիկական կանոնները: Հստ հողային, կլի-
սայական և ոելեֆային պայմանների շրջա-
նի գյուղերը բաժանել չորս յենթաշրջաններ:

1. Առաջին յենթաշրջանի մեջ մտցնել
զ. Թալինի հողերի լեռնային մասը, Ղարա-
գուլա, Թըլք, Գյալթո, Քյալաշքեկ, Սորիկ,

Արեգ, Սարտնջի, Ն. Աբբիկ, Հլիճյաթաղ
Սույսպ, Զարնջա, Ջիթհանքով, Բարով գյու-
ղերը և Մաստարայի հողերի դաշտային
մասը:

2. Յերկրորդ յենթաշրջանի մեջ մտցնել՝
վ. Թալինի հողերի դաշտային մասը, Ն. Թա-
լին, Աշնակ, Մեհրիբան, Արալի, Ն. Աղջա-
ղալա, Ագարակ, Յեշիլ, Բաղչաջուղ, Քյալա-
քյութ գյուղերը և Դաղալույի, Սյնալույի,
Գյողլույի, Ն. Ղարազոյմազի, Վ. Ղարազոյ-
մազի հողերի ներքին մասերը:

3. Յերրորդ յենթաշրջանի մեջ մտցնել՝
Ն. Փիրթիքյան, Իրինդ, Դիան, Շղարշիկ, Վ.
Աղջաղալա, Բայսոց, Ավթոնա գյուղերը և
Վոսկեթասի, Ղըմզույի հողերի ներքին մա-
սերն ու Գյողլույի, Դաղալույի, Այնալույի,
Ն. Ղարազոյմազի, Վ. Ղարազոյմազի հողե-
րի լեռնային մասերը:

4. Չորրորդ յենթաշրջանի մեջ մտցնել՝
Աղփաման, Ահազի, Մուսլուղի, Վ. Փիր-
թիքյան գյուղերը և Մաստարայի «Դամեր»
կոչված հողերը, Վոսկեթասի հողերի լեռնա-
յին մասը, Ղբժույի հողերի վերին մասը:

ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ ԳԱԲՆԱՆԱՑԱՆՔ ՀԱՄԱՅ

1. Ապահովել աշնանավարը կառարված
հողամասերի խնամքով մշակումը գարնանը,
ընդունում աշնանավար արված ծանր, կրպ-
չուն հողերը, ինչպես և ուշ աշնանավար ար-
ված հողերը, պետք ե կրկնավար արվեն ու
փոցիսկեն: Մյուս հողերում աշնանավարի
ամբողջ տարածությունը պետք ե կուլտի-
վացիայի յենթարկվե կամ փոցիվի դաշտա-
յին աշխատանքներն սկսելու տուաջին որե-
րին: Արմատները հողամասերից հավաքեն,
դուրս տանել և այրել:

2. Բանջարանոցային կուլտուրաների և
կարտոֆիլի ցանքի համար հերկը կատարել
20—25 սմ. խորությամբ և վորակով (յու-
րաքանչյուր անգամ, արտօ վարելուց հետո,
այդ հողամասը պետք ե ընդունվի վարի վո-
րակը պարզող հատուկ հանձնաժողովի կող-
մից):

Հացահատիկային կուլտուրաների համար
վարը կատարել 18—20 սմ. խորությամբ:

ԱՐԵԱՆԱՑԱՆԻ ՍԵՐՄԵՐԻ ՆԱԽՈՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Յանվելիք բոլոր տեսակի սերմացուռները տեսակավորել և հարյուր տոկոսով դուել այն հասցնելով պետական կոնդիցիային:

2. Կատարել սերմ-ֆոնդերի վորթակական ստուգում առաջին անգամ՝ մինչև լդեկտեմբերի մեկը, յերկրորդ անգամ՝ հունվարի 30-ին, իսկ յերրորդ անգամ ստուգումն ավարտել ցանքն սկսելուց 20 որ շուտու Նըմուշները պետք ե վերցնել կցված ազրոնումի կամ լարուանտի միջոցով:

Վոչ մի դեպքում չի թույլատրվում ցանք կատարել առանց սերմերն ստուգող լարուրատորիայի փաստաթղթերի, վորոնք կնշեն սերմերի պետական կոնդիցիա ունենալը: Կոնդիցիային չհամապատասխանող սերմացուն պետք ե կրկին անգամ դուել և նմուշնուղարկել անսալիգի:

3. Մինչև ցանք կատարելն ամբողջ սերմացուն ախտահանել — չոր ախտահանումը կատարել ցանքից 15-20 որ առաջ, իսկ

թաց ախտահանումը՝ ցանքին դուգընթաց: Վոչ մի դեպքում չի թույլատրվում բահով, թիակով կամ պարկով ախտահանել:

Գարու և հաճարի սերմացուն ախտահանել կիսաշոր յեղանակով, իսկ ցորենը — մինչև մեկ տոկոս վարակվածության դեպքում — ախտահանել չոր մեթոդով, 1-2 տոկոս վարակվածության դեպքում՝ թաց յեղանակով (ֆորմալինով), իսկ 2 տոկուցից բարձր վարակվածության դեպքում՝ ըստ հնարավորին կատարել միջկոլտնտեսային, փոխանակում — հարկան կոլտնտեսությունից վերցնելով լավորակ սերմացու, կամ հակառակ դեպքում՝ այն ևս ախտահանել ֆորմալինով:



ՅԱՆՔԻ ԺԱՄԿԵՑՆ ՈՒ ՆՈՐՄԱՆԵՐԸ

1. Գարնանացանն ավարտել 6-9 աշխատանքային որում:

2. Ըստ կուլտուրաների, ցանքի ձևերի և յենթաշրջանների սահմանել ցանքի հետեւյալ նորմաներ.

(8-րդ եջում ևես աղօւայակը)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յանքի սերմի նոր-
մաները յենթաշրջանների համար միջինն
են Յուբալանչյուր կոլտնտեսության, ա-
ռանձին բրիգավի հողամասի վրակը և
ցանքի ժամկեաը նկատի ունենալով սեր-
մի քանակն ըստ հողատեսակի կարող է
փոփոխան յենթարկել:

IV

ՑԵԼԵՐԻ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ԺՈՄԿԵՑՆԵՐԸ

1. Վաղ ցելը կատարել գարնանացանին
զուգընթաց և բոլոր յենթաշրջաններում ա-
վարտել վոչ ուշ քան մայիսի 1-ը:

2. Ցելի խորությունը պետք է լինի
20-22 սմ.:

3. Ցելը կատարելուն պիս հողամասն ան-
միջապես զիգզագել և հարթել:

4. Հետագայում ցելերի վրա անձրեներ
տեղալուց, կամ մոլախոտեր յերեվալուց և
կեղևակալելուց հետո անմիջապես կատարել
մակերեսային վիխրացում, բայց վոչ ուշ
քան հիմնական ցել կատարելուց 15-20 որ
հետո՝ թեփերը նախապես հանված բազմա-
խով գութաններով (լուշչինիկներով)՝ ցե-
լերը մաքրել մոլախոտերից:

5. Առաջին վիխրացումից հետո, ամռան

Ցանքի ձեփերը	Կուլտու- րաներ	Սերմի նորման ըստ յեն- թաշրջանների			
		1-ին դաշտական	2-րդ դաշտական	3-րդ դաշտական	4-րդ դաշտական
Շարքացան	Գարնան ցորեն	1,3	1,3	1,3	1,3
	Գարնան գարի	1,5	1,5	1,5	1,4
Հաղացան	Գարնան ցորեն	1,4	1,4	1,4	1,4
	Գարնան գարի	1,8	1,7	1,75	1,75
»	Վիկա- վարսակ	1,5	1,55	1,6	1,5
	Կորնդան	1,1	1,0	1,0	1,0
»	Առվույտ	0,2	0,2	0,2	—
	Կարտոֆիլ	20,0	20,0	20,0	20,0
»	Ցեղիպտա- ցորեն	0,50	0,60	0,60	0,60
	Կտավհատ	0,45	0,45	0,50	0,50
Շարքացան	Վիկա- վարսակ	1,35	1,40	1,50	1,50
	Կորնդան	1,0	0,90	0,90	0,90
»	Ցեղիպտա- ցորեն	0,50	0,50	0,50	—

Ընթացքում հողը փիրացնել յերկրորդ անգամ, կամ զիգզագել, փոխցել այն ցեղը, վորի վրա մոլախոտեր կյերեվան, կամ այն կկեղելակալվի:

6. Հարոսների խոտի հունձն սկսել խոտաբույսերի 50 տոկոսի ծաղկման շրջանում և խոտնձից անմիջապես հետո կտտարել վարը:

7. Ցելին զուգընթաց զիգզագել փոցխել այն հողերը (ցեղը), վորտեղ աշնանացան և կատարվելու, իսկ հաջորդ տարվա գարնանացանի ուշ ցելերը թողնել առանց փոցխելու՝ ակոսային դրությամբ:

8. Ուշ ցելն սկսել և ավարտել—1-ին և 2-րդ յենթաշրջաններում՝ հունիսի 20-ին ու ավարտել հուլիսի 20-ին, իսկ 3-րդ և 4-րդ յենթաշրջաններում՝ հուլիսի 1-ին ու ավարտել ոգոստոսի 1-ին:

9. Բերքահավաքին զուգընթաց կատարել խոզանավար 8-10 սմ. խորությամբ:

V

ՅԱՆՔԻ ԽՆԱՄՔԻ

1. Վորպես կանոն յերկու անգամ հարյուր տոկոսով քաղհանել և աշնանացանի, և գար-

նանացանի տարածությունները, այն հաշվով, վոր ցողուն զցած չլինի (դեռ լույս չեղած) և վոչ մի մոլախոտ դաշտում չմնա:

2. 1936 թվին ոշնանացան կատարած դաշտերից 1937 թվի վաղ գարնանը փոցխել կավային, կավալվաղային հողերը, իսկ գարնանացան հացահատիկների ցանքերը փոցխել թփակալման շրջանում: Եռյանը կատարել բնական խոտհարքների, առվույտի ու կորնգանի ցանքերում:

3. Հնձել միջնակների ցանքերի գլխածայրերի, առուների, չագիների, ճանապարհների վրա բուսած մոլախոտերը՝ մինչև նրանց ծաղկելը: Քաղհանված և հնձված մոլախոտերն անմիջապես հավաքել ու հեռացնել գարտերից:

4. Մինչև գարնանացանն սկսելը մաքրել բոլոր վոռոգվող թե մայր, և թե ամբողջ ջրային ցանցի առուները և լճակները: Ոգտագործել գարնան հեղեղների ու անձրևների ջրերը: Զուրն ուղագործել արդյունավետ կերպով: Ջրելու աշխատանքը կատարել գիշերը և ցերեկը՝ չտալով վոչ մի կաթիլ ջրի կորուստ:

5. Յանքերը վոռովել առնվազն յերկու
անգամ, առաջինը՝ թիվակալման (լուլա գցե-
լու), յերկրորդը՝ հասկեր գցելու շրջանում:

6. Մնուցում կատարել փոցինի տակ և
ջրի հետ միասին:

VI

ՍԵՐՄԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Յուրաքանչյուր կոլտնտեսության ցան-
քային տարածություններից առանձնացնել
սերմարանների հատուկ հողամասեր՝ ընտիր
սերմացու ցանելու համար—աշնանացան ցո-
րեն՝ 12 տոկոս, գարբի՝ 13 տոկոս, գարնա-
նացան ցորեն՝ 15 տոկոս և ընդեղեններ՝ 15
տոկոս (ըստ ամբողջ ցանքի տարածու-
թյունների):

2. Սերմարանների հողամասերի համար
վերցնել ցանքաշրջանառության, մոլախոտե-
րից աղատ դաշտերը: Գարնանացանի կուլ-
տուրաններն ամբողջապես ցանել շարքացա-
նով ցրտահերկ կատարված հողամասերում: Սերմարանները քաղհանել առնվազն 2-3
անգամ, այն հաշվով, վոր, նախքան լուլա
գցելը, վոչ մի մոլախոտ չմնա:

3. Սերմարանները հնձել լրիվ հասունաց-
ման շրջանում, խուրձ կապել և բարդոց
դնել դաշտում, փոխադրումը կատարել հըն-
ձից վոչ ուշ քան 3 որ հետո, Քյուլաշը դի-
զել ախտահանված կալում և կալսումն սկսել
հնձից 5-7 որ հետո:

4. Սերմերը զտել սերմազտիչով և նրա
առաջին տեսակը փոխադրել պահեստը՝ 12—
15 տոկոս խոնավություն ունենալու մոմեն-
տին:

Պահեստները պետք են լինեն չոր, լուսա-
վոր և նախորոք ախտահանված:

5. Սերմացուն պետք են պահել ամբա-
րում վոչ ավելի քան յերկու մետր բարձ-
րության շերտով:

6. Սերմարաններում կատարել տեսակա-
վոր քաղհան:

VII

ՊԱՅՔԱՐ ՎՆԱՍՍՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ

1. Վնասատուների գեմ տանել սիստեմա-
տիկ պայքար, յուրաքանչյուր կոլտնտե-
սությունում կազմակերպել աղդանշանային
կետեր, ունենալով ազրո-թղթակիցներ:

ԵՐԵՎԱՆՎԱՐԴԻ ՅԵԿ ՊԱՅՔՄՈՐ ԿՈՐՈՒՍՏ-
ՆԵՐԻ ԴԵՄ

2. Մկներ, դաշտային կրծողներ, սորելու-
ներ յերեալու դեպքում կազմակերպել զբանց
գեմ պայքարող հատուկ շտաբներ, ձեռք
բերել համապատասխան դեղորայք և կարճ
ժամանակում ավարտել այդ պայքարը:

3. Վնասատուներին լիովին վոչնչացնելու,
համար, բոլոր տեսակի հացահատիկային
պահեստները, հորերը, ամբարներն և այն
տեղերն ուր պահպում և հացահատիկն ախ-
տահանել քլորոպիկրինով, նավթակրային
և մուլսիայով, ծծումբով, նայած թե ինչ աս-
տիճանի յեն վարակված: Ախտահանումից
առաջ դատարկել պահեստները և ամբար-
ները, ինչպես նաև ախտահանել բոլոր տե-
սակի տարաները, կալսիչները, պարկերը,
սայլերը, կամերը և բոլոր ինվենտարը:

4. Հացահատիկային սերմացուների ախ-
տահանման համար կազմել հատուկ արձա-
նագրություն՝ գյուղատնտեսի, կուտնտվար-
չության նախագահի և բրիգադիների ստո-
րագրությամբ:

1. Սերմացույի համար պետք և ունենալ
հատուկ բաժանմունքներով, չոր, միջանցիկ
քամիներից և վնասատուներից զերծ պա-
հանաներ:

2. Արգելվում և սերմ-ֆոնդերն այլ նպա-
տակների համար հատկացված հացահատիկի
հետ պահելը:

3. Բերքահավաքի գյուղատնտեսական
գործիքները և մեքենաները վերանորոգել
կարգավորել մինչև մայիսի 20-ը և լրացնել
դրանց պակասը:

4. Վերանորոգել և կարգավորել գյուղա-
միջյան և դաշտամիջյան ճանապարհներն ու
կամուրջները, վոչ ուշ հունիսի 20-ը:

5. Կատարել տարաների ու պահեստների
անհրաժեշտ վերանորոգում, մաքրել և ին-
վնատարիզացիայի յենթարկել պահեստները:

6. «Ռեկրայնկայի» և «Դելֆի» (քոփկ)
տեսակի ցանքերը հնձել մոմային հասունաց-
ման լրջանում՝ 3-5 որվա ընթացքում, իսկ

տեղական աշնանացան սպիտակահատ, դարա-
դըչոյ, սպիտակ թոքքաշ տեսակի ցանքերի
բերքը հավաքել 5-ից—8 որվա ընթացքում:

7. Բերքահավաքին զուգընթաց կազմա-
կերպել հասկերի հավաքում:

8. Հնձի հետ զուգընթաց խուրձեր կա-
պել և բարդոց դնել՝ հասկերը դեպի ներս,
մեջքի վրա, չի թույլատրվում 3 որից ավելի
դաշտում թողնել հնձած հացահատիկը:

9. Կազմակերպել բարդոցների տեղափո-
խումը, դեղ դնելն ու քյուլաշի կալումը:
Կալերի համար ընտրել գյուղից հեռու տառ
փարակ, հարթ վայրեր: Նախորոք պատրաս-
տել կալի տեղը, ջրել հարթել սպազել և
այնպես անել վոր ճեղքվածքներ չառաջա-
նան և ապա կալի յերեսն այրել (ախտա-
հանել):

10. Կազմակերպել հակահրդեհային միջոց-
ներ—ձեռք բերել հրդեհաշեջ մեքենաներ և
գործիքներ: Կալերի շրջակայքում ունենալ
ջրով լի տակառներ և առուներ: Քյուլաշի
գեղերը դնել կալսիչներից հինգ մետր հե-
ռավորության վրա:

11. Բերքը պահել 12-15 աստիճանից վոչ

ավելի խոնավությամբ, իսկ ավելի խոնավ-
լիներու դեպքում, այն չորացնել, ապա նոր
պահեստ լցնել:

12. Կալումն ավարտել վոչ ուշ, քան բեր-
քահավաքից 10—15 որ հետո:

13. Հարցը խնամքով տեղափոխել հատուկ
մարագները և ծածկի տակ, վոչ ուշ քան
քամիարելուց 1—2 որ հետո:

14. Առվույտի, կորնպանի և բնական խոտ-
հարքների խոտը հնձել մասսայական ծաղ-
կումից հետո, խնամքով չորացնել դաշտում
և առանց կորուստի տեղափոխել գյուղ 1—2
որվա ընթացքում:

IX

ԱՇԽԱՑԱՅԻ ՀՐԵԼԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ ՅԵՎ ՅԲՏԱՀԵՐԿԸ

1. Գարնանացանի ընթացքում կատարված
վաղ ցեղերը, միջին և ուշ ցեղերն սպազոր-
ծել աշխանացանի համար, նախորոք կատա-
րելով կրկնավար:

2. Վոչ մի դեպքում չի թույլատրվում աշ-
նանացան կատարել ցեղ չարված հողի վրա:

3. Ջրովի հողամասերում կատարել արաթ՝

կավային, սպիտակ հողերում (Աշնակ, Նորալին, վ. Թալին, Յեշի, Ազարակ գյուղերում և Այնալույի, Ներքին և Վերին Ղարագոյմազների Ներքին հողերում և այլն), իսկ լեռնային հողերում ցանել և ապա ծըել:

4. Աշնանացանի և հաջորդ տարվա գարնանացանի սերմացուն զտել կալում, այն պահանջով չոր պահեստներում, վորակական անամփղը հասցներով պետական կոնդիցիային:

5. Աշնանացանը կատարել գյուղախմբերի ագրո-կոնֆերանսների կողմից առաջադրված սերմացուների տեսակներով՝ սպիտակահատ, դարաղչղ, սպիտակ թոքքաշ:

6. Ցանքի ընթացքում, ըստ հողբաժնի կողմից տրված պլանի, հողերը հարյուր տուկոսով մաքրել քարերից:

7. Աշնանացանի սերմացույի ցանքի նորման սահմանել մեկ հեկտարի համար՝ շաքացան 1,5 ցենտներ, շազացան 1,7 ցենտներ, աշնանացան վիկայի համար՝ շարքացան 1,3 ցենտներ, շազացան 1,5 ցենտներ (առանց գարու կամ վարսակի խառնուրդի): Այս նորմաները վերաբերում են բոլոր յենթաշրջաններին:

8. Աշնանացանն սկսել առաջին յենթաշրջանում՝ սեպտեմբերի 10-ից, 2-ըդ յենթաշրջանում՝ սեպտեմբերի 5-ից, 3-ըդ յենթաշրջանում՝ ոգոստոսի 25-ից և 4-ըդ յենթաշրջանում՝ օգոստոսի 30-ից ու բոլոր յենթաշրջաններում ավարտել 6—9 աշխատանքային որում:

9. Ցըտահերկն սկսել անմիջապես հնձին գուգահեռ, նախորոք կատարելով խողանավար, վորից 25—30 որ հետո կատարել խոր վար, այն հաշվով, վոր այդ բոլոր յենթաշրջաններում ավարտվի վոչ ուշ քան հոկտեմբերի 10-ը:

10. Ցըտահերկը թողնել ակոսային գրությամբ:

X

Ծ Ա Ռ Ա Տ Ե Կ Ա Ւ Մ

1. Նոր ծառերի անկման աշխատանքներն սկսել մարտի 10-ից և ավարտել վոչ ուշ քան դաշտային աշխատանքների սկըսվելը:

2. Պաղատու ծառեր տնկել՝ վ. Թալինի,

Ն. Թալինի, Աշնակի, Ե. Ղարաղոյմակի:

Այնալույի, Մեհրիբանի, Յեշիլի, Ագարակի,
Մաստարայի, Գոյզլույի, Դադալույի և Ն.
Աղջաղալայի կոլտնտեսությունների հողեռ
րում և կոլտնտեսականների տնամերձ հո-
գածասերում:

3. Գարնանը և աշնանը բուժել պաղա-
տու ծառերը, ձեվափորել ու կտրոված ճյու-
ղերն այդուց կույս տանիլ Հավաքել թափ-
ված տերեկները, մաքրել պտղատու այգին
և առանձին վայրում հավաքված տերեներն
այրել:

4. Խստիվ կերպով արգելել ծառերն ա-
ռանց թույլտվության կտրելն ու պաղատու
այգիներում անասուններ արածացնելը:

5. Պտղատու տունկերը ջրել տնկելու
որվա յերեկոյան, կամ վոչ ուշ բան հաջորդ
որը վաղ առավոտյան:

6. Այգիները պարարտացնել՝ գոմաղբով,
մնային աղբով և մոխիրով:

7. Պտղատու այգիները ջրել՝ առաջին
անգամ մինչև ծառերի ծաղկեն՝ ապրիլ
15-ից մինչև մայիսի 20-ը, յերկրորդ ան-
գամ՝ հունիսի 15-ից մինչև հուլիսի 10-ը,
իսկ յերրորդ անգամ՝ ոգոստոսի 15-ից

միսած, չորրորդ անգամ՝ սեպտեմբերի 10-ից
սկսած: Այգիները, փորեկուց մեկ ամիս հե-
տո, ջրել, պահպանելով նույն ժամկետները:

8. Մինչև ծառերի ծաղկելը, ծառերի
տակ գտնվող բողոք տեսակի մոլախոտերն
արժատախիլ անել և գուրս տանել սյգուց:

9. Պտղուներով ծանրաբեռնված ծառերի
ճյուղերի տակ խճմար (հենաբան) տալ—
հուլիսի 20-ից մինչև ոգոստոսի 10-ը:

10. Ծառերի վրա մնացած հիվանդուա
միջատներից վնասված պտղուները խնամքով
հավաքել ու այդուց գուրս տանել

11. Ծառերի ըներն ու հաստ ճյուղերը
մաքրել վնասատուներից և գրանց հեռաց-
նել այդուց:

12. Նորատունկ պտղատու ծառերը ջրել
20 որը մեկ անգամ: Նորատունկ այգիների
ջրելը սեպտեմբերի 25-ից հետո արգելել:
Ամառվա ընթացքում, յերկու անգամ ջրե-
լուց հետո, պարտադիր կերպով ծառերի
ըների շուրջը փլարեցնել:

13. Տերեկաթափից անմիջապես հետո կա-
տարել աշնան բուժումը հինգ տոկոսանոց
յերկաթ արջասպի լուծութով:

14. Անդգուշությամբ, կամ գիտավորությամբ ծառերը փչացնողները, կամ նորատունները կտրողները կտուգանվեն մինչև հիսուն ոռւբլի գումարով, կամ կյենթարկվեն մինչև 15-օրյա հարկադիր աշխատանքի:

15. Աշնակի և Վ. Թալինի կոլտնտեսությունների տնկարանների խնամքը, պահպանումը և հետագա զարգացման պատասխանականությունը դնել Աշնակի և Վ. Թալինի գյուղաբոհուրդների և կոլտնտվարչությունների նախագահների վրա:

XXI

ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՄԵՐՄԱՆԲՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ

1. 1938 թվին խոտաբույսերի տարածությունները լավորակ սերմերով ապահովելու նպատակով պարտադիր համարել և առանձնացնել նախկին տարիների կորնդանի համերից 300 հեկտար, իսկ վեկայի ցանքերից՝ 50 հեկտար:

2. Սերմացույին ցանքերի նկատմամբ սահմանել հատուկ հսկողություն և ինամք:

Խիստ պատասխանատվության յինթար-

կել սերմացու ստանալու նպատակով թողած հրապարակների խոտը հնձող կոլտնտվարչություններին և առանձին անձանց:

3. Կորնգանի սերմացույի տարածությունը վաղ գարնանը պարարտանցել խառն աղբով, փոշիով և անմիջապես զիգզագել, յերկուսից-յերեք անգամ ջրել և հետագայում կատարել դաշտային հետադրություն, տալով համապատասխան փաստաթուղթի:

4. Սերմացու կորնգանի հունձը կատարել ցողունների ներքին և միջին սերմերի հասունացման շրջանում:

5. Սերմացույի հունձը կատարել առավոտյան ցողի ժամանակ, մանր խուրձեր կապել և խուրձերը կանգնեցնել հասկերը ղեկափ վեր (խուրձերը կանգնեցնել խաչաձևվ), մեկից-յերկու որ հետո, առավոտյան ցողի ժամանակ, խուրձերը տեղափոխել կալը և չորացնելուց հետո զիգեր

6. Դիղելուց 8-10 որ հետո, կամով կամ կալիչ մեքենայի միջոցով կալսել սերմացուն զտել սերմազտիչով, չորացնել, տեղափոխել միանգամայն չոր և ապահովեած պահուները:

7. Միայն հողբաժնի և ՄՏԿայանի մասնագիտական հատուկ հանձնաժողովի թույլտրվությամբ կարելի յե վարել կորնդանի և առվույտի այն հողամասերը, վորոնք բոլորովին կտրվել և անպետքացել են: Այդ դեքսում պետք ե կազմել համապատասխան արձանագրություն:

XII

ՅԱՆՔԱՆԴԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

1. 1937 թվին ցանքաշրջանառություն անցկացնել 21 կոլտնտեսությունում:

2. Ցանքաշրջանառություն կիրառված կոլտնտեսություններում հսկողություն սահմանել չխախտելու ցաքնաշրջանառության կանոնները և ցանքը կատարել միմիայն համաձայն փոխանցիկ տախտակի:

3. Պարտավորեցնել կոլտնտեսվարչություններին ցանքաշրջանառության դաշտերը նախագծելիս հատուկ հանձնաժողովներ կազմել՝ հողաշինարարի և գյուղատնտեսի հետ դաշտում վորակավորելու հողերը:

XIII

ՆԻՑՐՈԳԻՆԱՅԻՆ

1. 1937 թվի գարնանացանի ժամանակ նիւթողինացման յենթարկել ցանկելիք կորնդանի և վիկայի սերմերը:

2. Նիւթողինացման աշխատանքները կատարել գյուղատնտեսների հատուկ ցուցմունքներով և նրանց անմիջական ղեկավագությամբ:



Սույն պարտադիր վորոշման հսկողությունը գնել գյուղխորհուրդների և միջայի բջջանային բաժանմունքի վրա, վորոնց իրավունք և վերապահվում առողջապահության անձանց, վորոնք կիսախտեն կարգը:

Սույն պարտադիր ագրոտեխնիկական կանոնները խախտող անձանց յենթարկել վարչական առողջապահության մինչև 50 ռ. գումարով, կամ մինչև 15-որյա հարկադիր աշխատանքի, իսկ պաշտոնական անձանց յենթարկել կարգապահական և դատական պատասխանատվության:

Պարտադիր ագրոտեխնիկական կանոն-

ների կիբառման պարբերական ստուգումը
դնել գյուղխորհուրդներին կեց ցանքերի վո-
րակն ստուգող հանձնաժողովների, հողբաժնի
և ՄՏԿայանի գյուղատնտեսների վրա:

Գյուղխորհուրդների և միլիցիայի շրջա-
նային բաժանմունքի վորոշումների վերա-
բերյալ բողոքող անձանց իրավունք և վե-
րապահվում 5 որվա ընթացքում բողոքար-
կել շրջանային գործադիր կոմիտեյի նախա-
գահությանը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Երջգործկոմի նա-
խագահությանը բողոքարկելը չի կատաց-
նում ներզարծական միջոցների գործա-
դրումը:

Սույն պարտադիր ագրո-տեխնիկական
կանոններն ուժի մեջ են մեկ տարի ժամա-
նակով՝ 1937 թվի հունվարի մեկից մինչև
1938 թվի հունվարի մեկը:

Թալինի շրջանային գործադիր
կոմիտեյի նախագահ՝
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թալինի շրջանային նողբաժնի
վարիչ՝ Մ. ԿԻՐԱԿՈՅՅԱՆ

Թալինի շրջանային նողբաժնի
ավտգ գյուղատնտես՝
Մ. ՍԱՖԱՐՅԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սըլլագրիչ Ա. ՆՈՐՑԱՆ

Վ. Թալին, «Բ. ԴՐԱՇՈՎՎԱ-Լ տպաբան»

Գլուխացի լիազոր Լ-9562 Տեղամատ 1000 ռլ.

198

ՀՀ Ազգային գրադարան



NL0276868

14719